

Special deterrence is realized by means of pressure on social groups, individuals and organizations or scopes of activity in the case of which there are legal grounds to suppose that they are highly criminogenic or victimized. Criminality deterrence can be made both towards state or public organizations and towards the certain activity of the concrete individual, as well as it can be the result of his subordinate activity. In this connection one can distinguish criminality deterrence (including extortions) of the specialized and non-specialized subjects. Direct deterrence of extortion is aimed at the extermination of the criminal inclinations already existing in the society, in the connection of which the law of "About the criminality deterrence" was supposed to be adopted and to settle the work of public inspectors according to it.

ԱՐՅՈՒՄԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНИЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ՀՏԴ 33 (479.243)

Տնտեսագիտություն

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ
ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Շ.Շ.Ասրյան

Տնտեսական աճ ապահովող տնտեսությունը ավելի մեծ հնարավորություններ ունի նոր սոցիալական ծրագրեր իրականացնելու, աղքատության և էկոլոգիական խնդիրները լուծելու ուղղությամբ՝ առանց սպառման գոյություն ունեցող ընդհանուր մակարդակը նվազեցնելու և ներդրումների ծավալները կրճատելու:

Տնտեսական աճի ապահովումը փոխառնչվում է ոչ միայն պետական համապատասխան քաղաքականությանը, այլև սոցիալ-տնտեսական այնպիսի տեղաշարժերին, ինչպիսիք են՝ տնտեսության կառուցվածքը, արդյունաբերության կառուցվածքը, տնտեսության դիվերսիֆիկացման մակարդակը, ներդրումների դինամիկան և կառուցվածքը, աշխատուժի արտադրողականության բաշխվածության անհավասարությունը և այլն: Այդ տեղաշարժերը ոչ միայն տնտեսական աճի պայմաններ են, այլև տնտեսության մրցունակության բաղադրիչներ:

2000-2005թթ. ԼՂՀ տնտեսության համար բնութագրվեցին որպես ակտիվ բարեփոխումների տարիներ. բարեփոխումների լայնածավալ միջոցառումները կարողացան ապահովել տնտեսական աճի բարձր ցուցանիշներ: Հետագայում ևս բարեփոխումներն ունեցան շարունակական բնույթ, սակայն 2010թ. խաթարվեց տնտեսության զարգացման կայուն ընթացքը, երբ կրճատվեցին և ապրանքային արտադրության, և ծառայությունների աճի տեմպերը: Սակայն պետական արդյունավետ տնտեսական քաղաքականության իրականացման արդյունքում հնարավոր դարձավ 2011թ. ապահովել 109,1 տոկոս տնտեսական աճ:

Աղյուսակ 1-ից երևում է, որ դիտարկվող ժամանակահատվածում ԼՂՀ-ում գրանցվել է բարձր՝ հիմնականում երկնիշ թվերով տնտեսական աճ: Այդ ընթացքում տնտեսական բարձր աճի վրա դրական ազդեցություն են ունեցել և ծառայությունների, և ապրանքների արտադրության ոլորտները՝ արդյունաբերությունը, շինարարությունը, գյուղատնտեսությունը¹:

Տնտեսական աճի առկա մակարդակը և միտումները մասամբ բացատրվում են ներդրումների դինամիկայով՝ կապված վերջիններիս միջև առկա ուղղակի կախվածությամբ:

ԼՂՀ ՀՆԱ-ի փոփոխությունները (2002-2011թթ.)

(տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ)

Աղյուսակ 1²

Տարիներ	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
համախառն ներքին արդյունքը շուկայական գներով	111,3	120,2	118,2	114,1	110,1	108,8	114,3	113,1	105,5	109,1

¹ Հողվածում դիտարկվում են տնտեսական աճի և իրական հատվածի փոփոխությունները

² ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2002-2008թթ. էջ 155:

ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2004-2010թթ. էջ 157:

այդ թվում՝ ապրանքների արտադրություն	119,9	132,5	123,3	103,9	108,2	103,9	113,3	111,1	102,6	110,6
այդ թվում՝ արդյունաբերություն	124,4	168,8	197,8	95,7	121,0	105,8	108,1	116,6	105,0	103,9
անտառային տնտեսություն	91,4	115,5	105,9	124,4	130,7	90,3	155,4	-113,6	107,7	113,1
գյուղատնտեսություն	124,7	120,6	95,1	97,1	89,8	105,4	121,4	101,6	-115,4	127,4
շինարարություն	90,1	141,7	132,8	159,6	125,4	98,2	106,9	119,1	121,0	104,9
ծառայությունների արտադրություն	104,9	109,1	111,3	123,7	109,4	108,2	114,9	117,5	109,3	110,5
ֆինանսական միջոցառության անուղղակիորեն չափվող ծառայություններ	132,2	138,0	115,8	183,2	158,5	100,6	108,8	132,7	134,5	136,8

Տնտեսության իրական հատվածի ճյուղերում ներդրումների աճի դինամիկան անկայուն է, որի պատճառով փոփոխվում է նաև առանձին ճյուղերի աճով պայմանավորված տնտեսական աճի ցուցանիշը: Այստեղ կարևոր միտումներից մեկն այն է, որ փոփոխության են ենթարկվում իրական ակտիվներում իրականացված ներդրումների թե՛ ծավալները և թե՛ կառուցվածքը: 2002-2009թթ. իրական ակտիվներում իրականացված ներդրումները անընդհատ աճում են ինչպես օտարերկրյա ներդրումների, այնպես էլ սեփական միջոցներով իրականացված ներդրումների հաշվին, որը և ԼՂՀ տնտեսության սոցիալ-տնտեսական կարևորագույն նվաճումներից մեկն է: Սակայն օտարերկրյա ներդրումները 2009-2010թթ. արձանագրում են նվազման միտումներ՝ իրենց վրա կրելով համաշխարհային տնտեսության զարգացումների ազդեցությունները:

Ներկա պայմաններում ներդրումների ակտիվացմանը կարող է նպաստել հարկային ճկուն քաղաքականությունը, որը շատ արտոնություններ է պարունակում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ներդրողների համար: Ազատականացված հարկային կլիման երաշխիք է ներդրումային միջավայրի ակտիվացման համար: 2008թ. հունվարի մեկից 1-100 մլն դրամ ներդրումների իրականացման դեպքում «Ծահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով երեք տարի ժամկետով սահմանվում է հարկային արտոնություն, իսկ հետագա երկու տարվա ընթացքում նախատեսվում է հարկի միայն 50%-ի վճարում:

Հետզհետե ժամանակահատվածում համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունները մեղմվելու և ներդրումների ակտիվացման նպատակով կառավարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում 2010թ. ընդունվել է «Գործարար միջավայրի բարելավման ծրագիր», որով սահմանված միջոցառումներն ուղղված են հարկերի վճարման գործընթացներում հաշվետվությունների պարզեցմանը և միասնականացմանը, հարկման դաշտի բարելավմանը, ընկերությունների հիմնադրման և լուծարման գործընթացների պարզեցմանը, ժամկետների կրճատմանը և հստակեցմանը, շինարարական թույլտվությունների տրամադրման գործընթացների պարզեցմանը, ժամկետների կրճատմանը, այս ոլորտում հասարակության իրազեկման մակարդակի բարձրացմանը, գույքի հանրային վաճառքի ժամկետների կրճատմանը, ներդրողների պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը, սեփականության գրանցման ընթացակարգերի պարզեցմանը, ժամանակի և ծախսերի կրճատմանը, տնտեսավարողների գործունեությունը պարզեցնելու համար հասարակության իրազեկվածության բարձրացմանը և ապահովմանը: «Գործարար միջավայրի բարելավման ծրագիրը», դրական ազդեցություն ունենենալով ներդրումային միջավայրի վրա, կապահովի տնտեսության տարբեր ոլորտներում վերջիններիս ծավալների աճ:

Իրական ակտիվներում իրականացված ներդրումների փոփոխությունները
ըստ ճյուղերի 2002-2010թթ. (մլն. դրամ)

(տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ)

Աղյուսակ²

Տարիներ	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Ընդամենը ներդրումները	108,1	91,4	79,6	163,2	99,1	178,6	187,4	117,3
Արդյունաբերությունում	133,7	79,3	61,9	166,3	25,7	25,7	52,0	141,1
Գյուղատնտեսությունում	1065,5	37,4	73,3	225,9	86,1	10,6	85,5	371,0
Շինարարությունում	458,1	28,6	321,1	168,4	60,0	289,9	470,4	102,7
Տրանսպորտ և կապ	39,1	504,3	14,3	217,8	410,9	144,2	81,2	16,4

¹ Stat-nkr. am.

Առևտուր և հասարակական սնունդ	22,8	103,1	51,8	241,4	92,2	141,0	1185,5	129,5
Այլ	66,4	134,7	115,7	143,3	134,2	92,5	266,9	121,1
Որից օտարերկրյա	85,6	100,5	100	34,7	218,4	421,2	47,5	85,4

Իրական ակտիվներում իրականացված ներդրումների փոփոխությունների գնահատման մակրոտնտեսական մոտեցումները ցույց են տալիս, որ եթե 2002թ. վերջիններս կազմել են ՀՆԱ-ի 34,9%-ը, ապա 2010թ.՝ 39,2%-ը:

Ներդրումների ոլորտում ստեղծված իրավիճակի, մասնավորապես՝ ըստ առկա ծավալների դրանց ճյուղային բաշխվածության և աղբյուրների վերլուծությունից երևում է, որ մակրոտնտեսական կայունության, ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործման պայմաններում անգամ ներդրումների առկա ծավալները դեռևս բավարար չեն՝ փոքր տնտեսության կայուն աճ ապահովելու համար: Հետևապես այսուհետև ևս սեփական խնայողությունների և օտարերկրյա ներդրումների ներգրավման ակտիվացման գործընթացը պետք է դառնա ԼՂՀ ներդրումային քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը: Ներդրումների ներգրավման խթանումը, տնտեսության մեջ դրանց ծավալների ավելացումը եղել և մնում են որոշիչ ԼՂՀ-ում տնտեսական զարգացման անհրաժեշտ տնայնիքի և ծավալների ապահովման համար: Ներդրումային գործընթացների ակտիվացումը կարող է ապահովվել հետևյալ միջոցառումների համակարգի միջոցով.

- այսուհետև ևս ներդրումների հոսքի և ներգրավման օրենսդրական դաշտի կատարելագործման ապահովում, արտադրանքի ծավալի և նոր կառուցվածքի ստեղծման ու զարգացման ներդրումային ընթացքի կարգավորում,

- ներքին ու արտաքին ներդրումների և ներդրողների համար հավասար իրավական պայմանների, իրավունքների և պարտականությունների կատարման ապահովում,

- ճյուղային ներդրումային ծրագրերի մշակում, ներդրումային փաթեթի ձևավորում՝ պայմանավորված կանխատեսված ծրագրային քաղաքականությունների իրականացմամբ,

- ընդհանուր ներդրումների ծավալի ու կառուցվածքի ձևավորման ֆինանսավորման աղբյուրների ուղղվածության կանխատեսումներ ու հստակեցումներ,

- ներդրումային արդյունավետության գնահատման ցուցանիշների ու չափանիշների համակարգերի մշակում:

Տնտեսական աճի ապահովումը բացատրվում է տնտեսության տարբեր բնագավառներում ՓՄՁ սուբյեկտների զարգացմանն ուղղված միջոցառումներով, վերջիններիս՝ տնտեսության մեջ ունեցած դերի բարձրացմամբ:

2003թ. ԼՂՀ կառավարությունը մշակել է «ԼՂՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական ծրագիր», որի համար հիմք է ընդունվել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ԼՂՀ օրենքը: Ծրագրի շրջանակներում ձևավորվել է «Փոքր և միջին ձեռնարկությունների աջակցության» հիմնադրամ (2005թ. վերանվանվել է «Զարգացման արցախյան գործակալություն», այժմ արդեն՝ «Արցախի ներդրումային հիմնադրամ»), որն իրավասու է մասնակցելու այդ ոլորտի համակարգման ու կարգավորման գործընթացներին՝ համապատասխան առաջարկություններ ներկայացնելով ԼՂՀ կառավարություն: ՓՄՁ սուբյեկտներին աջակցության նպատակով պետական ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների գերակշիռ մասը ուղղված է եղել ՓՄՁ-ին աջակցությանը, տնտեսական ու գործարար ակտիվության բարձրացմանը: Այդ նպատակով 2003-2009թթ. ՓՄՁ սուբյեկտների փաստացի ֆինանսավորումը ըստ տնտեսության ոլորտների՝ խաղողագործության, անասնապահության, ձկնաբուծության, պարենային և ոչ պարենային ապրանքների արտադրության, հյուրանոցային բիզնեսի, առևտրի և այլ բնագավառների, կազմել է 2862,11 մլն. դրամ, որը դրական ազդեցություն է ունեցել տնտեսական աճի ապահովման վրա, ընդ որում ինչպես տնտեսության նյութական, այնպես էլ ծառայությունների ոլորտի:

2008թ. հաստատվել է ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման կարգ, ըստ որի սուբսիդավորման չափը սահմանվում է վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի 10 տոկոսային կետը, որը հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ, իսկ գյուղատնտեսության բնագավառում մինչև մեկ տարի ժամկետով տրամադրված վարկի տարեկան տոկոսադրույքի մինչև 12 տոկոսային չափը: «ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում բանկերի կողմից հայտերի ֆինանսավորումը արդյունաբերության,

գյուղատնտեսության, առևտրի, շինարարության և ծառայությունների գծով, 2003թ. 155,58մլն դրամի համեմատությամբ աճելով 22,4 անգամ 2011թ. կազմել է 3490,48մլն դրամ: Պետական համակարգված միջոցառումների արդյունքում աճում է ՓՄՁ դերը տնտեսական համակարգում, որում շահագրգռված են թե՛ պետությունը և թե՛ մասնավոր հատվածը:

2011թ. ԼՂՀ ՀՆԱ-ի 32,5¹ տոկոսը ստեղծվել է փոքր և միջին ձեռնարկությունների կողմից 2010թ. 31,4 տոկոսի փոխարեն: Այն, անշուշտ, կարևոր նվաճում է, սակայն վերջիններիս զարգացման մակարդակը բավարար չէ ապագա պահանջների բավարարման տեսանկյունից կայուն և բարձր տնտեսական աճ ապահովելու համար: Զարգացման բարձր մակարդակ ունեցող տնտեսություններում ՓՄՁ-ի կողմից արտադրվում է ՀՆԱ-ի կեսից ավելին: Հետևապես պետական միջոցառումները այսուհետև ևս պետք է հետապնդեն վերջիններիս՝ տնտեսական համակարգում ունեցած դերի բարձրացման ապահովման նպատակ:

Ժամանակակից պայմաններում ՓՄՁ-ի զարգացման գործընթացում կարևորվում է զարգացման համաշխարհային փորձի ուսումնասիրությունը և դրա՝ տնտեսության առաձևափոխությունների հանգամանքի դիտարկմամբ ԼՂՀ տնտեսությունում կիրառումը:

Տնտեսական փորձառությունը ցույց է տալիս, որ փոքր բիզնեսի ապագան մեծապես կախված է խոշոր և ոչ խոշոր ձեռնարկությունների նեղ, կոռպորատիվ կապերի ավելի ընդլայնումից և խորացումից: Չինաստանի, Հարավայի կորեայի և այլ երկրների տնտեսություններում մեծ է այն փոքր ձեռնարկությունների թիվը, որոնք ինչ-որ ձևով գտնվում են խոշոր ձեռնարկությունների գործունեության «ուղեծրում»: Ընդ որում, կախված շուկայական մոդելից, այդ փոխառնչությունը կարող է դրսևորվել տարբեր կերպ: Այսպիսի փոխառնչության օրինակները ԼՂՀ տնտեսությունում տարածված չեն: Հաշվի առնելով փոքր, միջին և խոշոր բիզնեսի համակցման արտասահմանյան փորձը՝ անհրաժեշտ է ոչ միայն կառուցել այդպիսի մոդել, այլև այն հարմարեցնել ԼՂՀ արդյունաբերության զարգացման ծրագրին:

Տնտեսական աճի ապահովման տեսանկյունից ՓՄՁ-ների զարգացումը հիմնավորվում է նաև արդյունաբերության տարբեր ճյուղերի զարգացման տեմպերի և կառուցվածքային բարելավումների ապահովման տեսանկյունից:

ԼՂՀ տնտեսական աճի ճյուղային կտրվածքով վերլուծությունները ցույց են տալիս, որ տնտեսության իրական հատվածի կարևորագույն ճյուղերից մեկի՝ գյուղատնտեսության անկայուն աճով պայմանավորված՝ տնտեսական աճը անկայուն է: Գյուղատնտեսական համախառն արտադրանքի աճի տեմպերը ժամանակ առ ժամանակ վերափոխվում են նվազման: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2010թ. նվազել է 11,3%-ով՝ հիմնականում պայմանավորված բուսաբուծության համախառն արտադրանքի 19,7% անկմամբ: Իսկ արդեն 2010թ. առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման՝ նախորդ տարվա համեմատությամբ՝ 86,1% աճի միջոցով հնարավոր է դարձել ապահովել 127,4% աճ: 2011թ. տարվա արդյունքներով տնտեսական աճն ապահովող հիմնական գործոնն է գյուղատնտեսության համախառն արտադրանքի 20,1% աճը:

Արդյունաբերության աճով պայմանավորված տնտեսական աճի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հիմնականում ապահովվել է հանքարդյունաբերության աճի հաշվին, որի կրճատման արդյունքում կրճատվել է նաև տնտեսական աճը:

Դիտարկվող ժամանակահատվածում տնտեսական աճի մեջ զգալի է նաև շինարարության բաժինը: Ճյուղի աճի տեմպերը բացատրվում են շինարարության ոլորտում իրականացված ներդրումների ծավալի աճով, ինչպես նաև հարկային բարեփոխումների իրականացմամբ: ԼՂՀ տարածքում բնակարանային շինարարությունը ազատված է ԱԱՀ-ից մինչև 2013թ. հունվարի մեկը:

ԼՂՀ տնտեսական աճի վերջին շրջանի փոփոխությունները իրենց վրա կրել են ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունները՝ փաստելով սեփական վերանշակող արդյունաբերության զարգացման անհրաժեշտությունը: Ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը ԼՂՀ տնտեսության վրա դրսևորվել է մի շարք ուղղություններով՝

- «տեղական հանքահումքային արտադրանքի նկատմամբ արտաքին շուկաներում պահանջարկի կրճատումը,
- արտաբժույթային փոխարժեքների կտրուկ տատանումները,
- ներմուծվող ապրանքների գների բարձրացումը և ֆինանսական ռեսուրսների թանկացումը՝ պայմանավորված արտաբժույթի փոխարժեքի բարձրացմամբ,

¹ Stat-nkr.am, հաղորդագրություններ, ԼՂՀ ՀՆԱ-ն 2011թ.:

- տնդական ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի բարձրացումը և մրցունակության անկումը՝ կապված ներկրվող ռեսուրսների բարձրացված գների հետ,
- իրական հատվածում ներդրումների, այդ թվում նաև օտարերկրյա, համեմատաբար գաղվածությունը՝ պայմանավորված սպասումների անորոշությամբ»¹:

Կառավարության կողմից 2010թ. ընդունվել է «Կառավարության ծրագիր 2010-2012թթ.»։ Ըստ այդ ծրագրի՝ կառավարությունը կարևորում է այն ճյուղերի և արտադրությունների զարգացումը, որոնց բնորոշ է մրցունակ, ավելացված արժեքի մեծ բաղադրատարր պարունակող և արտահանմանը միտված արդյունքների արտադրությունը։ Ընդ որում առաջնային է համարվելու ներքին ռեսուրսների վերամշակման հետ կապված մրցունակ արտադրություններին օժանդակությունը։ Կառավարության կողմից հատուկ շեշտադրվել է ռեսուրսատար վարքագծից ձերբազատվելու նպատակով նոր տեխնոլոգիաների կիրառմամբ արդյունաբերության զարգացման ուղղության ընտրությունը։

Հետզհետե մասնաձևի ժամանակահատվածում տնտեսական զարգացումների ապահովման առումով զգալի են կառավարության կողմից ընդունված մի շարք ծրագրերի դերը։ Դրանք են «Կոորպորատիվ կառավարման», «Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման», «Պետական աջակցություն «Արցախի գործարարների միության» ստեղծման և կայացման» և այլ ծրագրերը և ծրագրային միջոցառումների իրականացումը։

Տնտեսական աճի ապահովմանը վերջին շրջանում նպաստել է էներգետիկայի արձանագրված առաջխաղացումները, նրբ 2010թ. գերակա ճյուղ է սահմանվել էներգետիկան՝ որպես տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի հիմնական մաս։ 2010-2012թթ. շահագործման են հանձնվել Թրդե1, Թրդե2, Սյունիք-1, Սյունիք-2 հիդրոէլկտրակայանները, որոնք արդեն արտադրում են էլեկտրաէներգիայի ԼՂՀ պահանջարկի մոտ 75%-ը, իսկ ապագայում ծրագրի շարունակման արդյունքում կարտադրվեն պահանջների՝ 100-110%-ը։

Հանրապետությունում էներգետիկայի ուղղված պետական քաղաքականության իրականացման արդյունքում գրանցվել է ճյուղի աճի տեմպերի բարձրացում, որը միաժամանակ նպաստել է հումքի և էներգիայի ներմուծումից տնտեսության կախվածության նվազեցմանը, տնտեսության ռեսուրսատարողության իջեցմանը։

Հետզհետե մասնաձևի ժամանակահատվածում աճել է նաև տնտեսության վարկավորումը։

Աճող տնտեսության ֆինանսավորման և տնտեսական աճի ապովման մեջ իր ավանդն ունի նաև նրկրի բանկային համակարգը։ Այսպես. 2011թվականին 2010թվականի նկատմամբ տնտեսության տարբեր ճյուղերում առևտրային բանկերի կողմից վարկավորման աճ է գրանցվել հետևյալ ոլորտներում՝ արդյունաբերություն՝ 8,9, գյուղատնտեսություն՝ 86,1, շինարարություն՝ 37,0, առևտուր՝ 14 և այլ ճյուղեր՝ 69,7 տոկոս։

2011թ. արդյունաբերության ճյուղերի աճերով պայմանավորված՝ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում մշակող արդյունաբերությունը կազմել է 30,5%, հանքագործական արդյունաբերությունը՝ 47,7%, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունը՝ 21,8%։ Այսինքն՝ արդյունաբերության առանձին ճյուղերի զարգացման և փոխհարաբերությունների անհամամասնությունները չեն հաղթահարվել և կարող են բացասաբար անդրադառնալ տնտեսական զարգացման ապագա գործընթացների վրա, հետևապես ԼՂՀ կառավարության տնտեսության զարգացման ապագա ծրագրերում տնտեսական առաջնահերթությունների ընտրության գործընթացը պետք է ելնի տնտեսության կառուցվածքային համաչափությունների ձևավորման անհրաժեշտությունից։ Այդ առումով հետաքրքիր է Արևմտյան նրկրների մեծ մասի տնտեսական աճի բնագավառում հաջողությունների փորձը, այդ նրկրներում տնտեսական աճը որոշակիորեն բացատրվում է հենց կառուցվածքային փոփոխություններով, որոնք ապահովում են արտադրության ընդհանուր շարժունակություն և որակական տեղաշարժեր։

Դիտարկվող ժամանակահատվածում տնտեսության ճյուղերի անհամաչափ աճերը հանգեցրել են նոր անհամամասնությունների ձևավորման։ Այսպես. ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքում 2002թ. համեմատությամբ 2011թ. ապրանքային արտադրության տեսակարար կշիռը նվազել է 7,3%-ով, իսկ ծառայությունների տեսակարար կշիռը՝ ավելացել 5,7%-ով։

ՀՆԱ-ի կառուցվածքը բնորոշում է տնտեսության զարգացման ոչ միայն տվյալ մակարդակը, այլև հնարավորությունները։ Կառուցվածքային տեղաշարժերն ազգային տնտեսության մակարդակով ապահովում են արատադրողականության փոփոխություն, որն էլ,

¹ Կառավարության ծրագիր 2010-2012թթ. էջ5:

ըստ ՄՀԶ-ի ուսումնասիրությունների, ապահովում է մրցունակության փոփոխություն¹: Տնտեսական աճի տեմպերը բարձր են այն տնտեսություններում, որտեղ ՀՆԱ-ի կառուցվածքում բարձր են բարձր արտադրողական ճյուղերը:

Տնտեսական աճի գործոններից մեկը տնտեսության տարբեր բնագավառներում մեկ աշխատողի արտադրողականությունն է: Այդ ուղղությամբ վերլուծությունները ցույց են տալիս, որ ԼՂՀ արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին արտադրողականությունը 2011թ. կազմել է 4369 ԱՄՆ դոլար, որը զգալի ցածր է համաշխարհային միջինից: Նշված ցուցանիշը առավել ցածր է գյուղատնտեսության բնագավառում, այն դեպքում, երբ գյուղատնտեսության ճյուղում զբաղված են աշխատանքային ռեսուրսների 20,2%-ը: Հետևապես ռեսուրսների արտադրողականության բարձրացման նպատակով ակնհայտ է աշխատանքային ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխման հիմնահարցը:

Չնայած վերջին տարիներին գրանցված տնտեսական աճի առկա բարձր տեմպերին՝ տնտեսության զարգացման մակարդակը չի համապատասխանում հասարակության պահանջմունքների բավարարման աստիճանին: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը, 2002թ. 182,2 հազ. դրամից աճելով 5,1 անգամ, 2011թ. կազմել է 936,1 հազ. դրամ: Տնտեսական աճի հետագա ապահովման անհրաժեշտությունը բխում է բնակչության սոցիալ-տնտեսական անվտանգության ապահովման շահերից: ԼՂՀ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակը չի ապահովում տնտեսական անվտանգության շեմային մեծությունը. շեմը համարվում է յոթնյակ երկրների նույն ցուցանիշի առնվազն 50%-ը². այն ցածր է նաև ՀՀ համապատասխան ցուցանիշից:

Արտաքին առևտուրը բնորոշվում է սահմանափակ հումքային ռեսուրսներով գերիշխող կառուցվածքով: Այսպես. 2011թ. հանրապետությունից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալի 62,1³%-ը կազմել են հանքահումքային մթերքները, 8,3%-ը՝ պատրաստի սննդի արտադրանքը, 7,5%-ը՝ բուսական ծագման արտադրանքը, 7,4%-ը՝ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը և այլն: Իսկ ներմուծման մեջ 20,2%-ը կազմել են հանքահումքային մթերքները, 15,5%-ը՝ պատրաստի սննդի արտադրանքը, 11,1%-ը՝ մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմները, 9,9%՝ տրանսպորտային միջոցները, 6,4%-ը՝ բուսական ծագման արտադրանքը և այլն: Դիտարկվող ժամանակահատվածում ներմուծման մակարդակն անընդհատ աճում է, և արտաքին առևտրի հաշվեկշիռ բացասական է:

Ներքին արտադրողի խթանումը առավել դժվարեցված է այս պայմաններում, քանի որ, մաքսային սահման չունենալով, կառավարությունը զրկված է մաքսային լծակների օգտագործման հնարավորությունից: Այս հանգամանքը ավելի է բարձրացնում հարկային մեխանիզմների դերը ներքին արտադրության խթանման գործում: ԼՂՀ կառավարության կողմից այդ հիմնախնդրի լուծման համար ձևավորվել են մեխանիզմներ, և մշտապես իրականացվում են հարկային բարեփոխումներ:

Վերջին շրջանում հարկային հիմնական բարեփոխումները ընդգրկել են շինարարության, բնակարանաշինության, զբոսաշրջության, սննդարդյունաբերության և այլ բնագավառներ:

Ֆինանսական ռեսուրսների սուղ պայմաններում մեծ նշանակություն ունի 2011թ. հունիսին «Կազմակերպությունների և անհատ ձեռնարակատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների պարտավորություններից արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքի ընդունումը: Տնտեսվարող սուբյեկտների՝ երկարատև ժամկետում կուտակված հարկային պարտավորություններից մասնակիորեն ազատումը կընդլայնի վերջիններիս ֆինանսական հնարավորությունները՝ ներդրումներ իրականացնելու համար, և կվերականգնվի դրանց վճարունակությունը: ԱԱՀ-ից ազատված են տեղական հումքով սննդամթերքի որոշ տեսակների արտադրությունը, իրացումն ու արտահանումը: «Ակցիզային հարկի մասին» ԼՂՀ օրենքով ենթաակցիզային ապրանք արտադրողներին հնարավորություն է ընձեռվում մինչև 2011թ., պարտավորությունների առկայությունից անկախ, ստանալու դրոշմանիշներ: Սակայն պետք է նշել, որ ոլորտում առկա են բացթողումներ, օրինակ՝ «Ծախսառեսարկի մասին» ԼՂՀ օրենքով նախորդ տարիների ավել ցույց տրված վնասի համար տուգանքը սահմանվում է ավել ցույց տրված վնասի 10%-ի չափով, սակայն «Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենքով նույն խախտման համար անհատ ձեռներեցների համար՝ 20%-ի չափով: Հարկային բարեփոխումները պետք է

¹ 2011-2012թթ. Հայաստանի մրցունակության ազգային զեկույց, էջ 10:

² «Вопросы экономик», N10, 1998, էջ 36:

³ ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը հունվար -դեկտեմբեր, 2011թ. էջ 83:

շարունակվեն հարկային համակարգում առկա բացթողումների վերացման, ներդրումների ակտիվացման խթանման նպատակով հարկային նոր արտոնությունների սահմանման ուղղությամբ:

ԼՂՀ տնտեսության համար կայուն տնտեսական աճի ապահովումը համարվում է բնակչության բարեկեցության բարձրացման և մշտական վտանգված գոյության պայմաններում երկրի պաշտպանության ապահովման անհրաժեշտ միջոցների հայթայթման և ավելացման ուղին: Այդ իսկ պատճառով տնտեսական աճի ապահովումը եղել է և այսօր էլ համարվում է ԼՂՀ կառավարության կարևորագույն նպատակադրումներից մեկը: Սակայն տնտեսության կենտրոնացվածությունը գյուղատնտեսության, շինարարության վրա, ռեսուրսահետևիվ արտահանումից կախվածությունը, աշխատուժի արտադրողականության ցածր մակարդակը և անհավասարաչափ բաշխվածությունը տնտեսությունում, ներդրումների ոչ բավարար մակարդակը և առկա կառուցվածքը երկարաժամկետ կտրվածքով չեն ապահովում բարձր և կայուն տնտեսական աճ: ԼՂՀ տնտեսության տնտեսական աճի վերջին փոփոխությունները ակնհայտորեն բացահայտեցին տնտեսության թույլ կողմերը՝ վեր հանելով կայուն տնտեսական աճի ապահովման տեսանկյունից տնտեսության մրցունակության բարձրացման հիմնահարցը՝ տնտեսության աճի խնդիրը՝ քանակականից տեղափոխելով որակական դաշտ:

Կառուցվածքային բարեհաջող փոփոխությունների միջազգային փորձը ապացուցում է, որ կառուցվածքային բարեփոխումների առանցքային ասպեկտը ազգային տնտեսությունների այն ճյուղերի աճի ապահովումն է, որոնք միջազգային շուկաների ծավալով ի վիճակի են հանդես գալու որպես տնտեսական աճի կրողներ: Իսկ դա կարող է ապահովվել պետության կողմից բազմակողմ, հետևողական հովանավորությամբ, որը պետք է համադրվի շուկայական մեխանիզմների հետ՝ առանց փոխարինելու և ճնշելու վերջինիս գործունեությունը:

Экономический рост и взаимоотношения социально–экономических сдвигов в современных условиях экономического развития НКР.

Ш. Ш. Асрян

Резюме

В статье рассмотрены последние тенденции экономического роста НКР и связанные с ними социально – экономические сдвиги.

Создание условий экономического роста во всех странах, в том числе и в НКР, является главной целью экономической политики страны. Обеспечение экономического роста в любой стране создает возможности формирования новых ресурсов для решения социально – экономических задач. Изучение проблемы выявило взаимосвязь стабильного экономического роста и социально – экономических преобразований в НКР.

В результате анализа экономического роста НКР сделаны предложения в необходимости структурного преобразования экономики НКР, в преодолении непропорциональности соотношения разных сфер экономики, стимулирования развития малого и среднего бизнеса и, в целом, в отношении необходимых мероприятий развития экономики НКР.

Economic Growth and Interrelation of Social-Economic Shifts in Modern Conditions of Economic Development of NKR.

Sh. Sh. Asryan

Summary

In the article the latest tendencies of economic growth of NKR and related social economic shifts are examined.

The creation of conditions of economic growth in all countries as well as in NKR is one of the main objectives of economic policy of the country. The provision of economic growth in any country creates opportunity of forming new resources for solving social economic problems. The study of the problem revealed interrelationship of stable economic growth and social economic transformation in NKR.

As a result of analysis of economic growth of NKR suggestions are made of the necessity of structural transformation of NKR economics, the overcoming of disproportionate correlation of various spheres of economy,

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵԼԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ՀՏԴ. 379.85(479.25+479.243)

Տնտեսագիտություն

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ում և ԼՂՀ-ում

Ա.Խ.Սիմոնյան

Զբոսաշրջությունը յուրաքանչյուր պետության տնտեսական գործունեության կարևոր բաղկացուցիչ մաս է, իսկ որոշ երկրներում այն կազմում է տնտեսության հիմնական շարժիչ ուժը և երկրի ներքին արդյունքի գլխավոր մասը:

2006 թվականին զբոսաշրջիկների այցելությունների թիվը կազմել է ավելի քան 846 միլիոն:

Միջազգային այցելությունները ապահովել են ավելի քան 733 միլիարդ ԱՄՆ դոլար եկամուտ, իսկ զբոսաշրջության ոլորտում զբաղվածների թիվը կազմել է ավելի քան 231 միլիոն աշխատող: Այս ցուցանիշները վկայում են, որ զբոսաշրջությունը ամենախոշորն ու ամենամրցունակն է ծառայությունների ոլորտում:

Համաշխարհային զբոսաշրջությունը կազմում է աշխարհի արտահանվող ծառայությունների 35%-ը: Աշխարհի զբոսաշրջային ծառայությունները 2007թ. կազմել են համաշխարհային ՀՆԱ-ի 3,6%-ը (1851,2 միլիարդ ԱՄՆ դոլար): Կանխատեսվում է, որ մինչև 2020 թվականը, համաշխարհային միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կաճի՝ հասնելով 1.6 մլրդ-ի, իսկ զբոսաշրջային ծախսերի գումարը կկազմի մոտ 2 տրիլիոն ԱՄՆ դոլար, իսկ աշխատողների թիվը՝ 262 միլիոն:

Վերջին 10 տարվա ընթացքում Հայաստանի զբոսաշրջության ոլորտում գրանցվել են զարգացման զգալի տեմպեր: Այնուամենայնիվ համաշխարհային և տարածաշրջանային համատեքստում Հայաստանում զբոսաշրջային արդյունաբերությունը բնութագրվում է միջազգային այցելուների համեմատաբար քիչ քանակությամբ: Հայաստանին են բաժին ընկնում Եվրոպայից զբոսաշրջային այցելությունների 0,08%-ը և համաշխարհային զբոսաշրջային այցելությունների 0,04%-ը: Ինչ վերաբերվում է ներգնա զբոսաշրջությունից ստացված եկամտին, ապա 2006 թվականին այն գնահատվել է 299 մլն. ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 4,7%-ը) :

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ-ում) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (ԼՂՀ-ում) զբոսաշրջությունը հայտարարվել է տնտեսության գերակա զարգացման ուղղություն: Այդ փաստը ապահովելու համար որպես կարևոր գործընթաց է դիտվում բնագավառի իրավական դաշտի կարգավորումը: Զբոսաշրջության բնագավառի իրավական կարգավորման հիմքը դրվեց 2003թ., երբ ընդունվեց «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Բացի նշված օրենքից հետագայում ընդունվեցին նաև մի շարք ենթաօրենսդրական ակտեր. մասնավորապես այս ակտերը.

- Հայաստանի Հանրապետության կառավարության «Զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը» հաստատելու մասին 2004 թվականի հունիսի 10-ի N 945-Ն որոշումը: